16486

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«20» 12 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0234-23

Ձեռնարկողը՝ *«Ուայդ Գեյթ» ՍՊԸ*
ք. Երևան, Գ. Քոչար 21

Գործունեությունը՝ *«Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2023-2032թթ. կառավարման պլան հիմնադրույթային փաստաթղթի նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն*
Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 12 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԲՓ № 0234-23

«20» դեկտեմբերի 2023թ.

«Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2023-2032թթ. կառավարման պլանի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Ուայդ Գեյթ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Հիմնադրույթային փաստաթուղթ
	- ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) հաշվետվություն, անտառկառավարման պլան, գծագրական նյութեր

Ներածական մաս. Համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն)՝ Կոտայքի մարզի «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի կառավարման պլանի մշակման համար հիմք են հանդիսացել շրջակա միջավայրի նախարարության՝ Անտառային կոմիտեի և «Ուայդ գեյթ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագիրը, 2022թ. Անտառային կոմիտեի պատվերով՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառների և անտառային հողերի անտառաշինական նախագծերի (անտառկառավարման պլանների) նախագծահետազոտական աշխատանքները, ինչպես նաև «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրված Տեխնիկական Առաջադրանքը՝ հիմք ընդունելով Անտառային օրենսգրքի պահանջները:

Անտառտնտեսության 2023-2032թթ. կառավարման պլանի նպատակն է «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի կազմում ընդգրկված յոթ՝ Մեղրաձորի (7187հա), Ծաղկաձորի (4003հա), Արզականի (8187հա), Բուժականի (1968հա), Արզնիի (2427հա), Երևանի (385հա) և Էրեբունու (468հա) անտառպետությունների համար նախատեսել կայուն անտառտնտեսության վարում և կառավարում՝ առաջիկա 10 տարիների համար: Հրազդանի անտառտնտեսության ընդհանուր տարածքը կազմում է 24.625հա:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հրազդանի անտառտնտեսության անտառկառավարման պլանը հանդիսանում է հիմնադրույթային փաստաթուղթ:

Նկարագրական մաս. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզում և ընդգրկում է նախկին Հրազդանի, Աբովյանի, Նաիրիի վարչական շրջանների և Երևան քաղաքի վարչական սահմաններում համապատասխան տարածքներ: Անտառտնտեսության տարածքի ձգվածությունը հյուսիսից հարավ 63կմ է, իսկ արևելքից արևմուտք շուրջ 23կմ է:

Անտառտնտեսությունն արևմուտքից սահմանակցում է Արագածոտնի անտառտնտեսությանը, հյուսիս-արևելքից՝ «Սևան» ազգային պարկին, հարավից Երևանի վարչական սահմաններին, հարավ արևելքից՝ Արզնիի անտառպետությանը՝

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի Ջրվեժի անտառպարկի տարածքներին, իսկ Մեղրաձորի անտառպետությունը հյուսիս-արևմուտքից՝ հիշյալ ՊՈԱԿ-ի կազմում գտնվող «Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրի տարածքներին:

Անտառտնտեսության անտառները տեղաբաշխված են Փամբակի լեռնաշղթայից հարավ, Գեղամա լեռնաշղթայից՝ հյուսիս-արևմուտք, Մարմարիկ գետի ավազանում, Ծաղկունյաց լեռնաշղթայի լեռնաբազուկների վրա, Կոտայքի սարավանդին և Արարատյան գոգավորության բարձրադիր շրջաններում: Հիմնական մասը գտնվում է Մարմարիկ և Դալար գետերի ավազաններում: Անտառտնտեսության տարածքին բնորոշ են բարձրադիր լեռները, ռելիեֆի հրաբխային ու էրոզիոն ձևերը, սարավանդներն ու գետահովիտները: Ցածրադիր մասում ռելիեֆը մեղմ ալիքավոր է, ծածկված հրաբուխներից արտավիժած լավաներով:

Անտառտնտեսության հողերը հյուսիսային հատվածում տեղաբաշխված են Փամբակի լեռնաշղթայի հարավային լանջերին՝ մինչև 2200-2300մ ԾՄ բարձրությունները: Հյուսիսային կողմնադրության լանջերին գերակշռողը մուգ անտառային հողերն են, իսկ հարավային կողմնադրության լանջերին առավելապես տարածված են մուգ դարչնագույն հողերը: Երևանամերձ տարածքներում հնուց ոռոգվող գորշ լեռնային հողերն են:

Անտառտնտեսության տարածքով հոսող ամենամեծ գետը Հրազդանն է (141 մ): Մշտական հոսքով գետերից են Ծաղկաձորը, Արագետը, Ջրվեժը: Տարածքում խոշոր լճեր և ճահճուտներ չկան: Արգելավայրի տարածքը հարուստ է հանքային ջրերով:

Կլիման, կախված ուղղաձիգ գոտիականությունից, բազմազան է՝ չոր, չափավոր ցամաքայինից մինչև բարեխառն լեռնային և ցուրտ լեռնային կլիմայական գոտի: Տարեկան տեղումների քանակը կազմում է 800մմ: Բացարձակ նվազագույն ջերմաստիճանն իջնում է մինչև -31°C: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը 5°C է: Ամռանը տիրապետող են հյուսիսային, տարվա մյուս եղանակներին՝ արևմտյան քամիները: Քամիների միջին արագությունը 3-4մ/վ է, օդի միջին հարաբերական խոնավությունը՝ 65%:

Հրազդանի անտառտնտեսությունը կազմավորվել է 1931թ.: Մինչև 1950թ. անվանվել է Երևանի անտառտնտեսություն, 1950-1962թթ.՝ Կոտայքի, իսկ 1962թ. անվանվել է Հրազդանի անտառտնտեսություն:

Անտառտնտեսության ներքին սահմաններն որոշվել են ռելիեֆային առանձնահատկություններով (ջրաբաժաններ, ձորակներ, գետակներ, լեռնալանջեր և այլն), որոնք բնության մեջ արտահայտիչ են և հանդիսանում են համեմատաբար կայուն սահմաններ՝ օգտագործելով երկրակապակցման համակարգեր, արբանյակային պատկերներ և տեղագրական քարտեզներ:

Հրազդանի անտառտնտեսության կառուցվածքը և քառակուսիների համարակալման ամփոփ տեղեկագիրն ըստ անտառպետությունների ներկայացված է Հաշվետվությունում աղյուսակների տեսքով, համաձայն որի անտառտնտեսության ընդհանուր մակերեսը 1990թ. համեմատությամբ 2022թ. ավելացել է 5260 հեկտարով: Անտառային հողերի ավելացումը բացատրվում է նախկին Երևանի անտառտնտեսության, Արզնիի և Բուժականի անտառպետությունների տարածքների, անտառային հողատեսքերի միացման, շրջակա բնակավայրերի կադաստրային և անտառտնտեսության ընթացիկ գույքագրմամբ անտառային հողատեսքերի և սահմանների ճշտման, ինչպես նաև անտառտնտեսության գործող սահմաններից դուրս սերմնային վերականգնված տարածքների միացման հանգամանքով: Անտառածածկ մակերեսն ավելացել է ընդհանուր 3965,9 հա-ով, իսկ ընդհանուր պաշարը՝ 159923 խտմ^3-ով:

Անտառտնտեսության ընդհանուր տարածքի բաժանումն ըստ հիմնական նպատակային նշանակության և հողատեսքերի հետևյալն է՝

- պաշտպանական նշանակության հողատեսքերի ընդհանուր մակերեսը զբաղեցնում է ամբողջ տարածքի 16,1%-ը (3986,5 հա), որից անտառածածկը՝ 1432,6հա է, նույն թվում անտառմշակույթները՝ 791,4հա: Հրդեհված, հատված և չվերականգնված անտառային տարածքները զբաղեցնում են՝ 206,9հա, անտառային բացատները և բաց (պարապուտ) տարածքները՝ 1552,7հա, նոսրուտները՝ 371,3հա: Ոչ անտառային հողերը զբաղեցնում են 423,0հա (ընդհանուր ոչ անտառային հողերի 20,6%-ը):

- հատուկ նշանակության հողատեսքերը բացարձակ գերակշռում են և զբաղեցնում են 19181,0հա (77,9%), որից անտառածածկ մակերեսը՝ 13772,8հա, նույն թվում անտառմշակույթները՝ 808,3հա, չմիակցված աղարթով անտառմշակույթները՝ 19,4հա: Հրդեհված, հատված և չվերականգնված անտառային տարածքները զբաղեցնում են 81,0հա, անտառային բացատները և բաց տարածքները՝ 1723,7հա, նոսրուտները՝ 1939,1հա: Ոչ անտառային հողերը զբաղեցնում են 1626,5հա (79,4%-ը):

- արտադրական նշանակության ընդհանուր հողատեսքերը զբաղեցնում են ընդամենը 1457,5հա (6,0%), ամբողջությամբ անտառածածկ:

Անտառտնտեսության ընդհանուր հողատեսքերում անտառածածկ մակերեսը 16662,9հա է, որից 1625,3հա է միակցված սաղարթով անտառմշակույթ (9,8%), հրդեհված, համատարած հատված և չվերականգնված մակերեսը՝ 287,9հա, անտառային բացատները և պարապուտները՝ 3276,4հա, նոսրուտները՝ 2310,4հա:

Ոչ անտառային հողերի մակերեսը կազմում է 2049,5հա:

Անտառտնտեսությունում հիմնական անտառկազմող տեսակներն են խոշորառէջ կաղնին, որի գերակշռությամբ ծառուտները զբաղեցնում են 12587,8հա՝ 910261խտմ^3 ընդհանուր պաշարով, կամ անտառածածկ մակերեսի 75,5%-ը և ընդհանուր պաշարի 74,7%-ը:պ Բոխու գերակշռությամբ ծառուտները զբաղեցնում են 986,1հա, ընդհանուր պաշարը՝ 68649խտմ^3, սոճուտները՝ 720,6հա, 83142խտմ^3: 1990թ. համեմատությամբ ընդհանուր մակերեսը նվազել է 413,4հա, ընդհանուր պաշարը ավելացել է 28357խտմ^3-ով:

Անտառտնտեսությունում կատարվել է անտառածածկ մակերեսի և պաշարի բաշխվածություն ըստ տարիքային խմբերի: Երիտասարդ տարիքային խմբի ծառուտները (I և II հասակային դասեր) զբաղեցնում են 453,9հա 19033խտմ^3 պաշարով, միջին տարիքի ծառուտները՝ 13950,4հա 1078037խտմ^3 պաշարով: Հասունացող ծառուտները զբաղեցնում են 890,7հա 63117խտմ^3 պաշարով, իսկ հասուն և գերհասուն ծառուտները միասին՝ 1367,9հա և 58636խտմ^3 (4,8%):

Անտառտնտեսությունում անտառները տեղաբաշխված են ծովի մակերևույթից 900-2500մ բարձրությունների վրա: Հյուսիսային կողմնադրությունների լանջերին տեղաբաշխված են անտառածածկ մակերեսի 61,2%-ը (10205,7հա), հարավային կողմնադրությունների լանջերին՝ 38,8%-ը (6457,2հա): Անտառածածկ մակերեսի 5,8%-ը (974,9հա) և ընդհանուր պաշարի 3,9%-ը (47854խտմ^3) տեղաբաշխված է մինչև 10° թեքությունների վրա, 11-20° թեքությունների վրա՝ համապատասխանաբար 14,3% (2364,1հա) և 11,1% (133528խտմ^3) 21-30° թեքությունների վրա՝ 30,8% (5146,5հա) և 30,8% (375921խտմ^3), 31°-ից բարձր՝ 49,1% (8177,4հա) և 54,2% (661520խտմ^3):

Անտառտնտեսության երիտասարդ և միջին տարիքային խմբերի ծառուտների մակերեսների 40%-ը (6679,0հա) գտնվում են մինչև 30° թեքությունների վրա, որոնց հիմնական հատվածներում նախատեսվել են խնամքի հատումները: Անտառտնտեսությունում գերակշռում են տարախոտային տիպի անտառները՝ 48,4% (8058,9հա), մերձալպյան անտառները՝ 32,7%-ը (5457,7հա) և մեռյալ ծածկույթով տիպի անտառները կաղնու և բոխու կոճղաշիվային ծառուտներում՝ 3,1%-ը (524,8հա):

Անտառտնտեսությունում անտառների միջին տարիքը 58 է, միջին բոնիտետային դասը՝ 4,8, ծառուտների միջին լրիվությունը՝ 0,58 է, 1հա միջին պաշարը՝ 73խտմ^3, միջին տարեկան աճը՝ 1,27խտմ^3:

Շնորհիվ բնակլիմայական ուրույն պայմանների անտառտնտեսության տարածքն աչքի է ընկնում բուսական համայնապատկերի արտակարգ հարստությամբ, որտեղ հանդիպում են անոթավոր բույսերի 63 ընտանիք և 122 ցեղին պատկանող 508 տեսակներ, բույսերից 3 տեսակ ընդգրկված է Հայաստանի բույսերի Կարմիր գրքում:

Անտառտնտեսության տարածքում լայն տարածում ունեն ուտելի և համեմունքային (32 տեսակ), մեղրատու (44), դեղատու (56), կերային (64) նշանակության տեսակները:

Անտառտնտեսության տարածքում հիմնականում հանդիպում են կաղնի, կաղնի-բոխուտային և խառը ծառուտները: Ենթանտառը թույլ արտահայտված տեսք ունի: Գիհու ծառուտները հանդիպում են աղքատ, քարքարոտ հողերի վրա: Խոտաբույսերից տարածված են փետրախոտերը, շյուղախոտերը, հացազգիները:

Հրազդանի անտառտնտեսության բազմատարրությունն ապահովում է անողնաշար կենդանիների բազմազանությունը (19 հազվագյուտ տեսակ գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում): Կաթնասունների զգալի մասը բնակվում են լայնատերև անտառներում (55 տեսակ, 9-ը գրանցված է Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում): Մարմարիկ և Դալար գետերի ավազանում բնակվող ձկնատեսակներն են կարմրախայտը, արևելյան տառեխիկը, Քուռի բեղլուն, կողակը, արծաթափայլ կարասը: Թռչուններից հանդիպում են շուրջ 190 տեսակ, որոնցից 130-ը բնադրում են: 36 տեսակը գրանցված են ՀՀ կենդանիների Կարմիր գրքում, որոնցից 11-ը ընդգրկված են նաև Բնության Պահպանության Միջազգային Միության Կարմիր ցուցակում:

Հրազդանի անտառտնտեսությունը և «Արզական-Մեղրաձորի» արգելավայրը հարուստ է սողունների տեսակներով (28 տեսակ, 8-ը գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում):

Կենսաբազմազանության հիմնական վտանգները շարունակում են մնալ ապօրինի ծառահատումները, որսագողությունը, չկանոնակարգված ձկնորսությունը, ջրերի աղտոտվածությունը, արածեցումը, բույսերի չհամակարգված հավաքը և արոտավայրերի ոչ ճիշտ կառավարումը, անտառային հրդեհները, որոնք ազդում են թե՛ ուղղակի՝ ձվադրման շրջանում, թե՛ անուղղակի՝ բնադրավայրերի ոչնչացման հետևանքով:

Անտառային էկոհամակարգերի և կենսաբազմազանության վրա ազդեցություն կարող է ունենալ կլիմայի փոփոխությունը՝ ջերմաստիճանի բարձրացումը և խոնավության նվազումը, ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների տարածումը և այլն:

«Արզական-Մեղրաձորի» պետական արգելավայրը հիմնադրվել է ՀՍՍՀ մինիստրների սովետի 1971թ. ապրիլի 9-ի N212 կարգադրության համաձայն ներկայիս Հրազդանի տարածաշրջանում՝ Դարալիկ և Մարմարիկ գետերի ավազանում՝ 1600-2100մ բարձրությունների վրա: Արգելավայրի ստեղծման նպատակը անտառային հազվագյուտ կենդանիների (գորշ արջ, վայրի խոզ, կովկասյան մարեհավ, կասպիական ուլար, երևանյան լեռատափաստանային իժ, սովորական իժալեզու և այլն) պահպանությունն է:

Համաձայն 2014թ. «Արզական-Մեղրաձորի» պետական արգելավայրի կառավարման պլանի պատրաստման նպատակով սահմանների ճշգրտման ուսումնասիրությունների՝ արգելավայրի ընդհանուր մակերեսը կազմել է 14488հա: Իրականացված փոփոխությունների արդյունքում անտառածածկ մակերեսը ավելացել է 3390,7հա: Անտառտնտեսությունը հյուսիս-արևելքից սահմանակցում է «Սևան» ազգային պարկին, իսկ Մեղրաձորի անտառպետությունը հյուսիս-արևմուտքից սահմանակցում է «Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրի տարածքներին:

Արգելավայրում գերակշռում են ցածրաբուն կաղնու ծառուտները 6871,2հա մակերեսով (52,7%) և 417724մ³ պաշարով (40,6%): Բարձրաբուն կաղնին զբաղեցնում է 3333,0հա (25,6%) 358442մ³ պաշարով (35,0%): «Արզական-Մեղրաձորի» արգելավայրն ունի հարուստ կենսաբազմազանություն:

Հիմնադրույթային փաստաթղթի դրույթների իրականացման շրջանակներում սահմանվել են «Հրազդան անտառտնտեսության» մասնաճյուղի առաջնային և երկարաժամկետ նպատակները: Կատարվել են տարածքի անտառների և անտառային հողերի քարտեզագրում՝ ըստ անտառի կառավարման պլանի, բոնիտետի, լրիվության, գերակշռող ծառատեսակների, հասակային դասերի, տարիքային խմբերի, նպատակային նշանակության, հրդեհանվտանգավորության դասերի և այլն: Կատարվել է սահմանների ճշգրտում, անտառային հատվածների գույքագրում, սերմնային տարածքների վեր հանում և պոտենցիալ գնահատում: Կատարվել է անտառապատման, անտառվերականգնման, անտառպահպանության և անտառօգտագործման ծավալների, անտառի կողմնադրույքի, անտառամերձ համայնքների բնափայտի և անտառի կողմնադրույքի կարիքների, անտառային պաշարների օգտագործման գնահատում:

Վեր է հանվել անտառանյութի օգտագործման սոցիալական և տնտեսական ազդեցությունը (բնափայտ, արոտավայրեր, կենսաարտադրանք, տեղական բնակչության զբաղվածություն, չքավորության աստիճան և եկամուտների ստացման հնարավորություններ, բնապատմական հուշարձանների դերը), ինչպես նաև դրանց նշանակությունը՝ տեղական կարիքների բավարարման տեսանկյունից: Սահմանում է տարեկան հատումների թույլատրելի քանակները, անտառապատմանը, անտառվերականգնմանը, անտառպահպանմանն ուղղված միջոցառումները:

Կառավարման պլանով նախատեսվում է նաև կենսաբազմազանության գույքագրման և գնահատման, բարձրարժեք բնապահպանական անտառների որոշման և քարտեզագրման, ինչպես նաև էկոհամակարգային ծառայությունների գնահատման աշխատանքներ, միջոցառումներ:

Հարուստ բնությունը, մաքուր օդն ու ջուրը, բազմաթիվ պատմամշակութային կառույցների առկայությունը, օրգանական սնունդը հրաշալի նախադրյալներ են ստեղծում այս տարածքում տուրիզմի զարգացման համար:

Տուրիստական ծառայությունների զարգացումը (ուղիներ, ձիարշավներ, քայլարշավներ, տեսարժան վայրեր, հյուրանոցային և հյուրատնային ծառայություններ և այլ) լրացուցիչ լուրջ ներդրում կարող է լինել համայնքային զարգացման մեջ:

Հրազդանի անտառտնտեսության ներկայիս սահմաններում անտառմշակույթների հիմնման աշխատանքներ իրականացվել են դեռևս նախորդ դարի 50-ական թվականներից:

2022թ. գույքագրմամբ անտառմշակույթների մակերեսը կազմել է ընդհանուր 1625,3հա, իսկ չմիակցված սաղարթով անտառմշակույթները՝ ընդամենը 19,4հա: Անտառտնտեսությունում մինչև 25° թեքության նոսրուտները, հատված, հրդեհված, չվերականգնված տարածքները և անտառային բացատներն ու պարապուտ տարածքները զբաղեցնում են 3233հա, որտեղ հիմնականում իրականացվում են անտառմշակութային աշխատանքները: 30°-ից բարձր թեքությունների վրա նշված տարածքները թողնվել են բնական վերականգնման ներքո:

Հրազդան քաղաքի էկոլոգիական վիճակի բարելավման նպատակով, կառավարման պլանով 2023-2032թթ. համար նախատեսվում է քաղաքից 5կմ-ոց շերտում հիմնել 86,8հա ընդհանուր մակերեսով անտառմշակույթներ, ինչպես նաև 88,2հա վրա դեգրադացված անտառների վերականգնման միջոցառումներ: Քաղաքի զարգացման հեռանկարային

փաստաթղթով հաշվի առնելով գոյություն ունեցող կանաչապատ տարածքների քանակը 18.99, ինչպես նաև քաղաքի արդյունաբերական ուղղվածությունը և տարածքում կանաչապատման ենթակա պահուստային տարածքների առկայությունը, նախատեսվել է կանաչապատման մակարդակը հասցնել 20մ²/մարդ պահանջարկի, ընդհանուր կանաչապատվելիք տարածքը հասցնելով 148հա-ի:

2023-32թթ. համար նախատեսվում են անտառհիմնման միջոցառումներ նոսրուտներում, բացատներում, պարապուտ տարածքներում և մահացած տնկարկներում՝ ընդհանուր 967,8հա վրա, նույն թվում բացատներում և պարապուտ տարածքներում 562,9հա, նոսրուտներում՝ 404,9հա: Ցածր լրիվության ծառուտների լրիվության և արտադրողականության բարձրացման միջոցառումներ նախատեսվում է վերականգնման միջոցառումներ ընդամենը 172,1հա վրա՝ հարթակների պատրաստման եղանակով՝ լրացուցիչ սերմերի ցանքսով, ինչպես նաև առանձին տարածքներում խրամատներում բուսակների կամ փոսերում տնկիների տնկման եղանակներով, չմիակցված սաղարթով անտառմշակույթների լրացում՝ 2հա և այգիներում լրացում 3,7հա:

Տնկանյութի տեսականու ընտրությունը կատարվել է ելնելով կոնկրետ անտառաճման պայմաններից, հարմարվածության և արժեքավոր տեսակների վերականգնման և կենսաբազմազանության պահպանման հանգամանքներից: 2023-32թթ. համար անհրաժեշտ տնկանյութը, ներառյալ նաև բուսակները և լրացման անհրաժեշտ 20%-ը կազմում է 2030550, իսկ միայն վերականգնման համար սերմերի պահանջը գնահատվել է 26889կգ:

Բնական վերականգնման օժանդակման նպատակով նախատեսվում է 30000գծմ ցանկապատում, որի արդյունքում շուրջ 3500հա անտառներում կկանխվի արտաքին բացասական ազդեցությունները՝ անասունների մուտքը և այլն: Նախատեսվող ցանկապատումն ըստ անտառպետությունների ներկայացված է Հաշվետվությամբ:

Միայն անտառտնտեսության անտառպատման և վերականգնման նախատեսվող ծավալների տնկանյութի տարեկան պահանջարկը բաց արմատային համակարգով բավարարելու համար պահանջվելու է մոտ 1,8հա մակերեսով տնկարան: Անտառտնտեսության գրասենյակի հարող տարածքում գործում է ջերմատնային տնտեսություն, որտեղ աճեցվում են փակ արմատային համակարգով սոճու, հացի, թեղի, թխկի և կեչի ծառատեսակների բուսակներ: Ջերմատան ներկայիս հնարավորությունը տարեկան շուրջ 320000 բուսակ է:

Կախված անտառհիմնվող տարածքի տեղադրությունից, վիճակից, աճեցվող ծառատեսակների կենսաբանական առանձնահատկություններից, անտառապատման նպատակից նախատեսվում են սերմերի ցանքի կամ տունկի եղանակով:

Բնական վերականգնման օժանդակում իրականացվում է ցանկապատման և հանքայնացման եղանակով, նախատեսվում է հարթակներով (1x1մ) լրացուցիչ սերմերի ցանքսով, որոնց քանակությունը կախված ծառուտի լրիվությունից, մայր ապարների ելքից և առկա բնական վերաճի քանակությունից, նախատեսվում է 500-1000 հատ 1 հեկտարում:

Անտառածածկ մակերեսի տեսակային կազմի փոփոխությունն ըստ գերակշռող ծառատեսակների ունի հետևյալ տեսքը.

№	Գերակշռող ծառատեսակը	Չափման միավորը	2022թ. փաստացի	Կանխատեսվում է			
				2032թ.	Փոփոխությունը 2022թ. նկատմամբ	2037թ.	Փոփոխությունը 2022թ. նկատմամբ

№	Գերակշռող ծառատեսակը	Չափման միավորը	2022թ. փաստացի	Կանխատեսվում է			
				2032թ.	Փոփոխությունը 2022թ. նկատմամբ	2037թ.	Փոփոխությունը 2022թ. նկատմամբ
1	Սոճի	հա	726,0	807,69	81,69	973,7	+247,7
2	Կաղնի	հա	3544,3	3618,31	+74,01	3946,5	+402,2
3	Կաղնի ցբն	հա	9052,6	9052,6		9052,6	
4	Բոխի	հա	114,1	144,1	+30	164,1	+50,0
5	Բոխի ցածրաբուն	հա	872	872,0		872,0	
6	Հացենի	հա	124,8	144,2	+19,4	174,2	+49,4
7	Թխկի	հա	25,9	45,9	+20	75,9	+50,0
8	Թեղի	հա	111,8	131,3	+19,5	161,3	+49,5
9	Ակացիա սպիտակ	հա	30,2	30,2		30,2	
10	Կեչի	հա	651,3	671,3	+20	701,3	+50,0
11	Կաղամախի	հա	68,0	68,0		68,0	
12	Լորենի	հա	323,8	343,8	+20	373,8	+50,0
13	Բարդի	հա	91,0	91,0		91,0	
14	Ուռենի ծառ	հա	36	36,0		36,0	
15	Ծիրանենի	հա	2,7	22,7	+20	32,7	+30
16	Գլեդիչիա	հա	0,1	0,1		0,1	
17	Տանձենի	հա	15,6	46,0	+30,4	80,6	+65,0
18	Փռշնի	հա	4,4	4,4		4,4	
19	Նշենի	հա	431,3	431,3		431,3	
20	Հունական ընկուզենի	հա	1,0	1,0		1,0	

№	Գերակշռող ծառատեսակը	Չափման միավորը	2022թ. փաստացի	Կանխատեսվում է			
				2032թ.	Փոփոխությունը 2022թ. նկատմամբ	2037թ.	Փոփոխությունը 2022թ. նկատմամբ
21	Արոսենի	հա	36,3	36,3		36,3	
22	Խնձորենի	հա	51,2	86,2	+35,0	96,2	+45,0
23	Բալենի	հա	9,4	9,4		9,4	-
24	Սալորենի	հա	0,1	0,1		0,1	-
25	Տույա	հա	0,4	0,4		0,4	-
26	Սզնի	հա	3,5	3,5		3,5	-
27	Փշատենի	հա	0,5	0,5		0,5	-
28	Գիհի	հա	288,9	288,9		288,9	-
29	Ակացիա դեղին	հա	4,7	4,7		4,7	-
30	Դրախտածառ	հա	52,7	52,7		52,7	-
31	Հուդայածառ	հա	0,4	0,4		0,4	-
32	Այլանթ	հա	2,1	2,1		2,1	-
33	Սոսի	հա	0,3	0,3		0,3	-
Ամբողջը		հա	**16677,4**	**17047,74**	**+370,34**	**17765,2**	**+1087,8**

Ստուգիչ ժամանակաշրջանում անտառային հողերի արտադրողականության բարձրացման նպատակով անտառշինությամբ նախատեսվում են հետևյալ միջոցառումները.

- անտառսերմնային բազաների հիմնում սելեկցիոն հիմքի վրա,
- անտառային մշակույթների հիմնում,
- ցածր լրիվության ծառուտների արտադրողականության բարձրացում,
- բնական վերաճին օժանդակող համալիր միջոցառումներ,
- խնամքի հատումների իրականացում,
- անտառպահպանական և անտառպաշտպանական աշխատանքների բարելավում,
- ընտրովի սանիտարական հատումներ:

Բարձրարժեք և բարձր արտադրողական անտառային տեսակների հիմնման միջոցով ընդլայնվելու է անտառածածկ մակերեսը, վերականգվելու են հատված և քայքայված անտառները, ծառուտները ձևավորվելու են ցանկալի ուղղությամբ՝ նպաստելով կենսաբազմազանության հաստատմանը:

Խնամքի հատումներն օժանդակելու են ծառուտների նպատակային ձևավորմանը, մասնավորապես տեսակային կազմի բարելավմանը, որակական և տարածքային տեղաբաշխմանը, անտառի հողապաշտպան, ջրապաշտպան, սանիտարահիգիենիկ, էսթետիկական հատկությունների բարելավմանը և անտառների արդյունավետության բարձրացմանը: 2023-2032 թթ. համար խնամքի հատումներ նախատեսվել են 1051,7հա անտառածածկ հատվածներում ընդհանուր պաշարը 100577խտմ^3:

Ընտրողական սանիտարական հատումները հնարավորություն են՝ բարելավելու անտառի սանիտարական վիճակը, պահպանելու ստուգիչ շրջանում անտառածածկ մակերեսը, բարելավելու տեսակային կազմը և ստանալու ծառուտների լրացուցիչ աճ: Սանիտարական հատման համար նախատեսվել են հիմնականում ցցաչոր սոճու ծառերը:

Անտառտնտեսությունում հատուկ անտառպատրաստման արտադրություն և անտառհումքային բազաներ չկան: Բնափայտը մթերվում է անտառվերականգնման հատումներից (արտադրական նշանակության անտառներում), անտառի խնամքի և սանիտարական հատումներից և մասամբ այլ հատումներից:

Նշված անտառօգտագործման ձևերից տեղի բնակչության համար առանձնակի կարևորվում է անտառի կողմնարդյունքը:

Անտառների պահպանության ուժեղացման, բնականոն վիճակի պահպանման, վիճակի բարելավման և կայուն կառավարման իրականացման նպատակով ամբողջ տարածքը բաժանվել է 38 պահաբաժինների:

Անտառտնտեսությունում անտառային ճանապարհները հիմնականում փափուկ (բնահողային) գրունտային են և սեզոնային օգտագործման: Ջրահեռացման կյուվետների, խողովակների և խճածածկի բացակայության հետևանքով ճանապարհների վիճակն անմխիթար է: Ճանապարհային ցանցի ընդհանուր երկարությունը գնահատվել է 910կմ է: Ճանապարհների ձգվածությունը 1000հա-ի հաշվով կազմում 27կմ: Անտառկառավարման 10 տարիների համար նախատեսվում է անտառտնտեսական և հակահրդեհային նշանակության ճանապարհների վերանորոգում (90կմ) և կառուցում (20կմ):

Անտառտնտեսության կառավարման պլանի տասնամյա գործողություններով նախատեսվել են նախազգուշացնող ցուցատախտակների տեղադրում, հանգստի և ծխելու տեղերի առանձնացում, ջրավազանների կառուցում, կրակմարիչների ձեռք բերում, հակահրդեհային ճանապարհների վերանորոգում, հանդիպումներ հարակից համայնքներում՝ հակահրդեհային իրազեկության բարձրացման և հակահրդեհային միջոցառումների իրականացման թեմաներով և այլն:

Հիմնադրույթային փաստաթղթով և անտառկառավարման պլանով նախատեսվող համալիր միջոցառումների արդյունքում անտառտնտեսության անտառային հողերում տեղի կունենա անտառածածկ տարածքի տեսակարար կշռի ավելացում և ծառուտի կազմի բարելավում: Անտառածածկ մակերեսի ավելացումը նախատեսվում է անտառային բացատներում և անթրոպոգեն նոսրուտներում անտառմշակույթների հիմնման, ինչպես նաև անտառվերականգնմանն օժանդակող միջոցառումների հաշվին:

Հիմնադրույթային փաստաթղթով նախատեսված գործողություններն ընդգրկում են Հրազդանի անտառտնտեսության տարածքը՝ ներառելով բնական լանդշաֆտները, մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսները, բուսական և կենդանական աշխարհը, պատմամշակութային և բնության հուշարձանները, կանաչ տարածքները: Տարածքի անտառտնտեսության՝ բուսական և կենդանական աշխարհի համար հիմնական վտանգ են հանդիսանում ապօրինի անտառհատումները, որոնք հանգեցնում են տարածքների մասնատմանը և դեգրադացիային: Կենսաբազմազանության համար վտանգավոր է նաև քիմիական նյութերի միջոցով վնասատուների դեմ պայքարը:

Անտառների կառավարման պլանով նախատեսվող միջոցառումների իրականացումը կնպաստի անտառի կենսամիջավայրի բարելավմանը և կայուն զարգացմանը՝ անտառների վերականգնմանը, անտառների օգտակար հատկությունների զարգացման և կայուն անտառօգտագործման ռազմավարության, կայուն անտառօգտագործման ինստիտուցիոնալ հզորությունների ամրապնդման և կատարելագործման, հիմնական ռազմավարական ուղիների ապահովմանը, այդ թվում՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կարողությունների հզորացման, ինչպես նաև անտառի պահպանական և պաշտպանական ծառայությունների՝ սերմնային, տնկարանային, որսորդական տնտեսությունների, մարդկային ռեսուրսների ուսուցողական և կրթական կենտրոնների և տեղեկատվական ցանցի հիմնադրման, կողմնակի անտառօգտագործման զարգացման, կայուն անտառակառավարմանը նպաստող օրենսդրական հենքի բարելավմանը:

Հիմնադրույթային փաստաթղթով նախատեսվում է անտառպահպանման, անտառահատման, անտառի բնառեսուրսների օգտագործման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումների իրականացում.

- կենսաբազմազանության տեսակային կազմի, տարածվածության, քանակական ցուցանիշների, բնակության վայրերի, կենդանիների միգրացիոն ուղիների առկա վիճակի և միտումների բացահայտում,
- ջրատար առվակների (կյուվետներ), ջրահեռացման խողովակների կառուցում՝ մակերևութային և գրունտային ջրերի հեռացման նպատակով,
- ջրհավաք ավազանների նախատեսում (3 հատ) հրդեհամարման աշխատանքների համար,
- հնարավորության դեպքում ոռոգման ցանցի կառուցում բույսերի աճն ապահովելու նպատակով և այլն,
- որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու է համապատասխան պետական մարմնին,
- ճանապարհներին, մարդկանց հնարավոր կուտակման վայրերում հրդեհային պահպանության կանոնների վերաբերյալ նախազգուշացնող ցուցատախտակների տեղադրում,
- հակահրդեհային միջոցառումների իրականացում,
- անտառմիջյան ճանապարհների նախատեսում և վերանորոգում՝ հրդեհամարման աշխատանքների կատարման նպատակով,
- անտառտնտեսության տարածքում անցումային գոտիների կառուցում՝ երթևեկությունը և մարդկանց տեղաշարժն ապահովելու համար և այլն:

«Հրազդան անտառտնտեսություն» կառավարման պլանով նախատեսվում է նաև ներդնել կենսաբազմազանության մոնիթորինգի համակարգ, որի նպատակն է կանխատեսել բնական և մարդածին ազդեցությունների հետևանքով առաջ եկած գործընթացների զարգացումը և կատարել կանխատեսումներ դրանց հետագա ընթացքի վերաբերյալ:

Հիմնադրույթային փաստաթղթի դրույթների իրականացման համար շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների և կառավարման պլանով սահմանվել է Հաշվետվությունում նշված բնապահպանական միջոցառումների, մոնիթորինգի ծրագրի, արտակարգ իրավիճակներում միջոցառումների պատշաճ իրականացման միջոցները: Այն ամփոփում է գործունեության իրականացման հետևանքով ակնկալվող բնապահպանական

և սոցիալական ազդեցությունները, նախատեսվող ազդեցությունների մեղմանն ուղղված միջոցառումները, իրականացնող մարմինների և գումարային գնահատումների վերաբերյալ տեղեկատվությունը:

Հաշվետվությունում ներառված է զրոյական և այլընտրանքային տարբերակների նկարագրությունը, ընտրված տարբերակի հիմնավորումը:

Հիմնադրույթային փաստաթղթով նախատեսվող համալիր միջոցառումների և մոնիթորինգի արդյունքում անտառտնտեսության անտառային հողերում տեղի կունենա՝ դեգրադացված անտառների վերականգնում, անտառածածկ տարածքի ընդարձակում և տեսակարար կշռի ավելացում, ծառուտի կազմի բարելավում, անտառի արտադրողականության բարձրացում, անտառօգտագործման ֆինանսական բազայի կայունություն, անտառի՝ մթնոլորտից ածխածնի կլանման կարողությունների վերականգնում, անտառային էկոհամակարգի կայուն զարգացում:

Եզրահանգումներ. Հիմնադրույթային փաստաթղթով նախատեսված գործողություններն ընդգրկում են Հրազդան անտառտնտեսության տարածքը, որը ներառում է բնական լանդշաֆտները, մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսները, բուսական ու կենդանական աշխարհը, պատմամշակութային և բնության հուշարձանները:

Տարածքի անտառտնտեսության՝ բուսական և կենդանական աշխարհի համար հիմնական վտանգ են հանդիսանում ապօրինի անտառհատումները, որոնք հանգեցնում են տարածքների մասնատմանը և դեգրադացիային, մարդու տնտեսական գործունեությունը՝ բուսականության այրումը կամ մաքրումը, որսագողությունը, արոտավայրերի կառավարման բացակայությունը, դրանց կանոնավոր այրումը, օրգանական և անօրգանական թափոններով կենսամիջավայրի աղտոտումը: Այս ամենի արդյունքում տեղի է ունենում բնական կենսամիջավայրի խախտում և քայքայում:

Անտառի կայուն կառավարումը նպատակաուղղված է դեգրադացված անտառային էկոհամակարգերի վերականգնմանը, անտառների բնապահպանական, սոցիալական և տնտեսական, օգտակար հատկությունների պահպանմանը, անտառների կայուն օգտագործմանը: Այն կնպաստի անտառային ոլորտի զարգացմանը, շրջակա միջավայրի, գյուղատնտեսության, անտառային արդյունաբերության համայնքային զարգացման հնարավորությունների համապատասխանեցմանը:

Անտառների վերականգնման, անտառների օգտակար հատկությունների զարգացման և կայուն անտառօգտագործման ռազմավարական, հիմնական ռազմավարական ուղիների ապահովման, այդ թվում՝ «Հայանտառ»-ի կարողությունների հզորացման, ինչպես նաև անտառի պահպանական և պաշտպանական ծառայությունների՝ սերմնային, տնկարանային, մարդկային ռեսուրսների ուսուցողական և տեղեկատվական ցանցի հիմնադրման, կողմնակի անտառօգտագործման զարգացման, կայուն անտառակառավարմանը նպաստող օրենսդրական հենքի բարելավմանն ուղղված միջոցառումները կնպաստեն անտառի կենսամիջավայրի բարելավմանը:

Հիմնադրույթային փաստաթղթով նախատեսվում է անտառպահպանման, անտառհատման, անտառի բնառեսուրսների օգտագործման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների իրականացում: Նախատեսվող միջոցառումների ծրագրի համար հիմք են հադիսացել ՀՀ անտառային օրենսգիրքը (2005թ.), սանիտարական հատումների իրականացման կարգը և անտառկառավարման պլանների մշակման հրահանգը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության Անտառային կոմիտեի «ՀԱՅԱՆՏԱՌ» ՊՈԱԿ «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2023-2032թ. կառավարման պլանը,

անտառտնտեսության ոլորտը կարգավորող ՀՀ օրենքներ, կառավարարության որոշումներ և միջազգային փաստաթղթեր:

Փորձաքննության գործընթացում «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2023-2032թ. կառավարման պլանի փաստաթուղթը լրամշակվել է՝ համաձայն ներկայացված և հանրային քննարկումների ընթացքում հնչեցված առաջարկությունների դիտողությունների: Փորձաքննության երկու փուլերում օրենսդրությամբ սահմանված կարգով Կոտայքի մարզպետարանում իրականացվել են հանրային քննարկումներ:

Փորձաքննական պահանջներ

- Հիմնադրույթային փաստաթղթով նախատեսված միջոցառումները հնարավորինս կատարել նախատեսված ժամանակահատվածում:
- Հիմնադրույթային փաստաթղթի դրույթների իրականացման ընթացքում կատարել շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ), կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Ուայդ գեյթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2023-2032թթ. կառավարման պլանի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ,
առաջատար մասնագետ՝ Աստղիկ Վարդանյան